

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**ԿԱՂԱՆԴԻ ԾԱՌ- ՋԱՐԴԱՐԵԼՈՒ ԹՆՃՈՒԿԱՅԻՆ ՀԱՐՑ**

Թերեւս անառարկելի է, որ իւրաքանիւր երեխայի Ամանորը ամենէն առաջ կը սկսի Կաղանդի ծառով (որն անմահութիւն պարգեւող Կենաց ծառի խորհրդանշն է), Ձմեռ Պապիով (որու նախատիպը՝ նոյն ինքը՝ Սուրբ Նիկողայոսն է) եւ ի հարկէ, Ձմեռ Պապի նուէրներով:

Այս ալ երկրորդ տարին է, ինչ 2019-ին հաստատուած, վաճառքին մեծ բաւերն մէջ Կաղանդի ծառ շտկելու գեղեցիկ աւանդութիւնը կը խախտուի Սուրբ Երկրին մէջ տեղի ունեցող պատերազմի եւ հազարաւոր անմեղ զոհերու, քաղաքական գետնի վրայ Սահմահայերու որոշ մասի արաբամետ, որոշ մասի հրէամետ ըլլալու եւ զանազան ըսի-ըսաներու պատճառով: Սակայն ի՞նչ է մեր փոքրիկներուն մեղքը, որ պիտի զրկուին Կաղանդի ծառով զմայլելու, ուրախանալու բերկրանքէն:

Նախ եկէք հասկնանք ուրկէ յառաջ եկած է Կաղանդի ծառը կամ Տօնածառը:

Կը պատմուի թէ շրջեղեղէն ետք առաջին ձիւնը Մասիսի վրայ իջած է Հայկ Նահապետի հօր՝ Թորգոմի ատեն: Մինչ այդ ծառերն ու ծաղիկները ցուրտէն չէին վախնար, եւ Հայոց աշխարհը նման էր մշտադալար զմրուխտ բուրաստանի:

Այդ ժամանակ հեթանոս հայերը Նոր տարին կը տօնէին գարնանամուտին: Օր մը, ճիշդ Նոր տարուայ նախօրէին, արտասովոր ցուրտեր կ'իջնէն Մասիսի գագաթէն եւ կը խուժեն դաշտերն ու հովիտները, ծառերը կը սկսին ցրտահարիլ: Թորգոմ՝ հող ու արմատով կը փրցնէ պարտէզի փոքրիկ ծիրանէնին եւ տուն կը տանի: Իրենց նահապետի օրինակին կը հետեւին նաեւ միւս թորգոմագունները: Մէկն իր բաւի դեղձէնին ներս կը տանի, միւսը՝ բալէնին, երրորդը՝ բարտիի փոքրիկ ոստը, չորրորդը՝ եղեւին, եւ Նոր Տարուայ սեմին բոլոր թորգոմագուններու տուններու մէջ ալ ծառեր կային: Կը հնչէ Նոր Տարուան գալուստն ազդարարող ծնծղան եւ կը սկսին տօնական ուրախութիւնները:

Մարդիկ չմոռցան տան կանաչ հիւրը: Կը պարէին անոր շուրջը, զարդարանքներ ու նուէրներ կը նետէին անոր ճիւղերուն: Ծառը կարծէք կը զարդարէր, շքեղաշուք կը դարձնէր տարեմուտը:

Նոր տարիէն ետք, երբ տաքը սկսէր, մարդիկ իրենց տուններէն դուրս կը հանէին ծառերը եւ վեստին կը տնկէին իրենց պարտէզներուն եւ այգիներուն մէջ: Յաջորդ տարուայ նախօրէին, թէեւ ցուրտ չէր ըլլար, սակայն մարդիկ այգիներէն դարձեալ ծառեր տուն կը տանէին եւ նախորդ տարուան պէս ուրախութիւններ կը սարքէին անոր շուրջ: Այնուհետեւ հայկական ընտանիքներու մէջ բոլոր նոր տարիներու գալուստը կը նշուէր կանաչ ծառի կամ ոստի ներկայութեամբ: Այդպէս ծառը դուրսէն տուն կը մտնէր եւ կը դառնար Տօնածառ¹:

Տօնածառը կամ Կաղանդի ծառը, ինչպէս եւ նշեցինք, Դրախտի կենաց ծառի խորհուրդն ունի, իսկ եղեւինի մշտադալարութիւնը կը խորհրդանշէ Աստուծոյ անսպառ

¹ Տէս Հ. Խաչատրեան, Սօսեաց ամառ, Երեւան, 1988, էջ 145-146:

բարիքները եւ անհատնում շնորհները: Ընդհանրապէս ամբողջ տարին մշտադաւար ծառերը, նոյնիսկ նախքան քրիստոնէութիւնը իւրայատուկ նշանակութիւն ունեցած են մարդոց համար: Հին ատեն մարդիկ կը հաւատային, թէ մշտադաւար բոյսերը կը պաշտպանեն մարդը չար ոգիներէ եւ հիւանդութիւններէ: Հին Եգիպտացիները կը պաշտէին Ռա չաստուծոյ, որ ունէր բազէի գլուխ եւ արեւն իբրեւ թագ կը կրէր: Արեւադարձէն ետք, երբ Ռան կ'առողջանար, Եգիպտացիներն իրենց տունները կը լեցնէին կանաչ ճիւղերով՝ իբրեւ խորհրդանիշ մահուան դէմ կեանքի յաղթանակին: Նմանօրինակ սովորոյթ մը կար Հնոմի մէջ, կանաչ ոստերը կը խորհրդանշէին առատ բերքը: Այդ կապուած էր Սատուրնի՝ երկրագործութիւնը հովանաւորող աստուծոյ հետ: Հիւսիսային Եւրոպայի մէջ այսպիսի սովորոյթ ունէին Քելթերը, որոնք կը կարծէին, թէ մշտադաւար ճիւղերը կը խորհրդանշեն յաւերժ կեանքը: Կաղանդի ծառը այսօրուան ընկալումով առաջինը սկսած են զարդարել Գերմանացիները՝ 16-րդ դարուն:

Քրիստոնեայ աշխարհին մէջ եղելին կը կոչուի նաեւ Ծննդեան ծառ քանի որ խորհրդաւորապէս կը կապուի Կենդանի Կենաց ծառին՝ Յիսուս Քրիստոսին հետ: Իսկ Կաղանդի ծառին գագաթը պսակող աստղը Բեթղէմեան աստղն է, որ Արեւելքէն եկած երեք մոգերը կ'առաջնորդէր դէպի Մսուր, ուր պիտի ծնէր աշխարհի Փրկիչը: Եւ ինչպէս մոգեր ընծաներ բերին Յիսուս Մանկան, այնպէս ալ մենք ընծաներ կը բերենք Կենաց ծառին: Իսկ գոյնզգոյն լոյսերով ողողուած եղեւնի կը խորհրդանշէ այն հոգեւոր լոյսը, որով լուսաւորեց մեր Տէրը՝ ողջ աշխարհը:

Երբ երկրին վրայ իջնէր խորհրդաւոր սուրբ գիշերը՝ մեծ ուրախութիւն պարգեւելով մարդոց, Բեթղէմի լքուած քարայրներէն մէկուն մէջ կը ծնէր աշխարհի Փրկիչը: Ականջ դնելով հրեշտակներու երգեցողութեան՝ հովիւներ կը փառաբանէին եւ երախտագիտութիւն կը յայտնէին Աստուծոյ: Հետեւելով ուղեցոյց աստղին՝ մոգերը հեռաւոր արեւելքէն կը շտապէին խոնարհելու Աստուածային Մանկան: Ո՛չ միայն մարդիկ, այլեւ քարայրը շրջապատող ծառերն ու ծաղիկները իւրովի կը մասնակցէին մեծ խորհուրդին: Անոնք ուրախ կը տարուբերէին՝ կարծէք կը խոնարհէին Օրհնեալ Մանկան: Բոլորն ալ կը փափաքէին տեսնել նորածին Փրկիչը, ծառերն ու թուփերը կը տարածէին իրենց ճիւղերը, ծաղիկները կը բարձրացնէին գլուխին՝ ջանալով տեսնել քարայրէն ներսը: Ամենէն երջանիկը քարայրի մուտքին կանգնած երեք ծառերն էին, որոնք լաւ կը տեսնէին Մսուրը եւ այնտեղ պառկած Մանուկը՝ շրջապատուած հրեշտակներու դասով: Այդ ծառերն էին՝ սլացիկ Արմաւենին, հրաշալի բուրոյղ Զիթենին եւ համեստ, կանաչ Եղեւնին: Եւ ահա կը լսուի հետեւեալ խօսակցութիւնը.

- Երթանք մենք ալ խոնարհինք Աստուածային Մանկան եւ անոր մատուցենք մեր նուէրները,- կ'ըսէ Զիթենին՝ դիմելով Արմաւենիին:

- Ինծի ալ առէք հետերնիդ,- ամչնալով կ'ըսէ համեստ Եղեւնին:

- Ո՛ւր մեզի հետ,- արհամարհանքով նայելով անոր՝ հպարտօրէն կ'ըսէ Արմաւենին:

- Իսկ դուն ի՞նչ ունիս, միայն ծակող փուշեր եւ զգուելի կաշուն խէժ:

Խեղճ Եղեւնին կը լռէ եւ հնազանդ ետ կը քաշի՝ չհամարձակելով քարայր մտնել: Սակայն հրեշտակը որ լսած էր ծառերուն խօսակցութիւնը, կը տեսնէ Արմաւենիին եւ Զիթենիին հպարտութիւնն ու գոռոզութիւնը եւ Եղեւնիին համեստութիւնը: Ան խղճալով Եղեւնիին կ'ուզէ օգնել անոր:

Փարթամ Արմաւենին խոնարհելով Մանկան, անոր կու տայ իր շքեղ պսակի լաւագոյն տերեւը եւ կ'ըսէ.

- Թող այս քեզի զովութիւն պարգեւէ տաք օրերուն:

Իսկ Զիթենին խոնարհեց իր ճիւղերն ու անուշաբոյր իւղ կաթեցուց, եւ ամբողջ քարայրը լեցուեցաւ անոյշ բոյրով:

Եղենին տխուր, սակայն առանց նախանձի կը հետեւէր անոնց. «Անոնք իրաւացի են, ինչպէ՞ս կրնամ բաղդատուիլ անոնց հետ: Ես այնքան խեղճ եմ, չնչին, արդեօ՞ք արժանի եմ մօտենալու Աստուածային Մանկան», - կը մտածէր ան:

Սակայն հրեշտակը ըսաւ անոր.

- Սիրելի՛ Եղենի, դուն քու համեստութեամբդ ինքզինքդ կը նուաստացնես, սակայն ես քեզի պիտի մեծարեմ եւ քոյրերէդ աւելի աղուոր պիտի զարդարեմ:

Եւ հրեշտակը նայեցաւ երկինք, մութ երկինքը փայլեցաւ պայծառ աստղերով: Հրեշտակը նշան մը ըրաւ, եւ աստղերը մէկը միւսին ետեւէն սկսան թափուիլ վար, ճիշդ Եղենիի կանաչ ճիւղերուն, եւ շուտով ան փայլեցաւ վառ լոյսերով: Իսկ երբ Աստուածային Մանուկը արթնցաւ, Անոր ուշադրութիւնը գրաւեց ոչ թէ քարայրի սքանչելի բոյրը եւ կամ Արմաւենիի շքեղ հովահարը, այլ փայլուն Եղենին:

Մանուկը նայեցաւ Եղենիին, ժպտաց եւ թաթիկները մեկնեց դէպի եղենին: Հըրճուեցաւ Եղենին, սակայն չհպարտացաւ, չմեծամտացաւ եւ իր ողջ փայլով ջանաց լուսաւորել մէկդի կեցած Զիթէնին եւ Արմաւէնին: Չարին ան պատասխանեց բարիով, իսկ հրեշտակը տեսնելով այդ՝ ըսաւ.

- Սիրելի՛ Եղենի, դուն բարի ես, ատոր համար ալ պիտի պարգեւատրուիս: Ամէն տարի այդ նոյն ժամանակ դուն կը զարդարուիս լոյսերու փայլով, եւ թէ՛ երեխաները, թէ՛ մանուկները կ'ուրախանան՝ նայելով քեզի: Եւ դուն, համեստ, կանաչ Եղենի, այսուհետեւ կը դառնաս Սուրբ Ծննդեան ուրախ տօնին խորհրդանիշը:

Ահա այսպիսով կեանքի խորհրդանիշ՝ Սուրբ Ծննդեան ծառը ամէն տարի իր խորհրդաւորութեամբ կը յիշեցնէ Կենաց ծառին՝ Յիսուս Քրիստոսի մասին. կեանքը Իրմով սկիզբ առաւ եւ կեանքը մարդոց համար Լոյսն է, որ կը փայլի խաւարին մէջ (Յովհ. 1:4):

Այսօր շատեր մոռցած են, որ Կենաց Ծառի պաշտամունք ունեցած ենք եւ տօն օրերուն տարբեր բոյսերու ճիւղերը զարդարած ենք չիրերով ու պտուղներով:

Նաեւ մոռցած են ուրիշ բան մը. այժմ նորեկ տարուայ պատուին եղենի զարդարելով՝ կը խնկարկենք նաեւ հայրենի հողին համար ինկած հայորդիներու անմոռաց յիշատակը: Այս մասին կը վկայէ իր «Սօսեաց Անտառ» ժողովածոյին մէջ արձակագիր Հայկ Խաչատրեան: Հայոց աշխարհի ծառատեսակներու պատմութիւնները շարադրած ատեն՝ ան ինքզինքին կը հարցնէ. «Ինչո՞ւ եղենին մշտապէս կանաչ կը մնայ», - ապա կը պատասխանէ. «Թշնամին խուժեց հայոց հող եւ սկսաւ աւերել, սպաննել, կողոպտել: Իշխանը փակուեցաւ իր ամառանային ամրոցին մէջ եւ չդիմագրաւեց թշնամին: Շինականը մէն-մենակ դուրս եկաւ թշնամիին դէմ: Տուաւ-զարկաւ, բայց մահացու վիրաւորւելով՝ սկսաւ նահանջել արիւնաքամ ըլլալով: Կ'ըսեն թէ հայոց աշխարհի բոլոր մշտականաչ եղենիները բուսած են զօրական դարձած եւ հայրենիքի համար զոհուած շինականի արիւնէն: Իշխանն ալ գնաց աշխարհէն, բայց անոր յիշատակը կանաչ շիւղով մըն ալ շնշանաւորուեցաւ: Իսկ եղենին կ'ապրի ու կանաչ կը մնայ 500 տարի, դար-

ձեռք կը վերընծիւղի եւ այդպէս անվերջ:

Հողը մշտականաչ կը պահէ հայրենիքի համար զոհուածներու յիշատակը»²:

Կենաց ծառը եղենիով փոխարինելը ազգային աւանդութիւններուն դաւաճանել չի նշանակէր, այլ պարզապէս ատոր վերաիմաստաւորում՝ ի յիշատակ հայրենիքին իրենց կեանքը զոհաբերած հերոսներու եւ ի պատիւ անոնց, որոնք այսօր զէնքը ձեռքերին հայրենի սահմաններու անվտանգութիւնը կ'ապահովեն:

Շատերու հարցումին, թէ «Այսքան զոհ ունեցանք, դուք տօնածառ կը դնէք», պիտի պատասխանեմ 44-օրեայ պատերազմի ընթացքին նահատակուած հերոս՝ Վաչագան Մանուկեանի հօր՝ բանաստեղծ Խաչիկ Մանուկեանի խօսքերով. «Վաչագանն ու մեր բոլոր տղաքը չզոհուեցան, որ տօնածառ չդնենք, այլ զոհուեցան որ տօնածառ դնենք: Վաչս կը սիրեր տօնածառ...»:

Հետեւաբար, քանի որ Կաղանդի ծառը վերածնունդի, Կենաց ծառի, մշտադալարութեան, նոր կեանքի, քրիստոնէութեան խորհուրդն ունի, մեր ազգին՝ յատկապէս այս արհաւիրաց օրերուն, թէ՛ հայրենիքի եւ թէ՛ Սուրբ Երկրին մէջ առաւել անհրաժեշտ է Կաղանդի ծառ կամ Տօնածառ զարդարելը, որպէսզի դարձեալ վերածնինք, որպէսզի հայ ազգը նոր ծիլեր տայ ու ինչպէս եղեւին՝ պահպանի իր մշտադալարութիւնը, իսկ մեր փոքրիկները ուրախանալու եւս մէկ առիթ ունենան:

ՆԵՐՍԵՆՆԻ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆՈՅԵԱՆ



² Հ. Խաչատրեան, Սօսեաց անտառ, Երեւան, 1988, էջ 168: